ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/119

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2020թ. թիվ 26/26-1/8198-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 01.06.2020թ. թիվ 01/61-8803 գրության հիման վրա, 04.06.2020թ. թիվ 26/26-1/8198-2020 գրությամբ նախաձեռնել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/119 ընթացակարգի շրջանակներում 15.06.2020թ. ժամը 10:40-ին և 24.06.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.06.2020թ. թիվ 01/61.8803 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 17.02.2020 թվականին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/3-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 47-րդ օրացույցային օրը ներառյալ, որը ավարտվում է 03.04.2020 թվականին, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի 8.14 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը 21.04.2020 թվականի հ. 45/6749 և 04.05.2020 թվականի հ. 45/7199 գրություններով դիմել է Ընկերությանը տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման

աշխատանքները ներկայացնելու համար, սակայն՝ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասը, 408-րդ հոդվածը և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետը, Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, այն որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն առաջարկել է, վերը նշված իրավական հիմքերով պայմանավորված նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությունով, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/119 ընթացակարգի շրջանակներում 15.06.2020թ. ժամը 10:40-ին և 24.06.2020թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 17.02.2020թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/3-1 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն) ստանձնում է նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող

ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 26.05.2020թ. թիվ 01/61-8515 ծանուցմամբ՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ուստի Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

3. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 26.05.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.06.2020թ. թիվ 26/26-1/8198-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 01.06.2020թ. թիվ 01/61-8803 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 17.02.2020թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/3-1 ծածկագրով աշխատանքների գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող

ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 47-րդ օրացույցային օրը ներառյալ:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 26.05.2020թ. թիվ 01/61-8515 ծանուցմամբ՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ուստի Երևանի քաղաքապետարանը, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 26.05.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) ***խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

Այսպիսով՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 17.02.2020թ. կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/3-1 Պայմանագրով ստանձնել է Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված նոր կոյուղագծերի /հեղեղատարների, խմելու ջրի ներքին ցանցի/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման

աշխատանքների կատարման պարտականությունը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 47-րդ օրացույցային օրը ներառյալ: Արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքները չի իրականացրել, խախտելով աշխատանքի կատարման ժամկետը, որի հետևանքով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2020թ. թիվ 26/26-1/8198-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**